**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 2**

**02.09.2020թ. կնքված N ՏԿԵՆ-ՀԲՄ-ԽԾԲ-2020/2Ն-1 նախագծերի պատրաստման եվ ծախսերի գնահատման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի**

ք. Երևան «09» «03» 2021թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Քարտաշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 02.09.2020թ. կնքված N **ՏԿԵՆ-ՀԲՄ-ԽԾԲ-2020/2Ն-1** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4"2, 7.5, 7.13 կետերը և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 181-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**Համաձայնագրի առարկան**

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի թիվ 1 Հավելվածում՝ տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույցում, կատարել հետևյալ խմբագրումները և փոփոխությունները.

- <<Չափաբաժին 1-ով նախատեսված նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման աշխատանքներ>> անվանման մեջ՝ <<աշխատանքներ>> բառը փոխարինել <<ծառայություններ>> բառով,
- <<2020թ. ՀՀ պետական բյուջե>> պարբերության մեջ՝ <<2020թ.>> տարեթիվը փոխարինել <<2020-2021թթ.>> տարեթվերով,
- <<Աշխատանքների անվանումը>> պարբերության մեջ <<Աշխատանքների>> բառը փոխարինել <<Ծառայությունների>> բառով, իսկ ծառայությունների անվանման մեջ՝ <<աշխատանքներ>> բառը փոխարինել <<ծառայություններ>> բառով:
- <<Աշխատանքի կատարման ժամկետը>> բաժնում <<Աշխատանքի կատարման>> բառերը փոխարինել <<Ծառայության մատուցման>> բառերով:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2021թ. Վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ՀՀ ք. Երևան, Աճառյան 54ք, 375040 |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | Ինեկոբանկ ՓԲԸ |
| ՀՀ 900011005718 | ՀՀ 2050022451291001 |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՎՀՀ 00813453 |
| գլխավոր քարտուղար Հ. Բատիկյան | Տնօրեն՝ Դ. Քարտաշյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՀԲՄ-ԽԾԲ-2020/2Ն-1 գնման պայմանագրի
«09» «03» 2021թ. Կնքված
Թիվ 2 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(ՀՀ դրամ)

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | 71241200/10 | նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայություններ | - | - | - | 15,912,000.0 | 15,912,000.0 | 15,912,000.0 | 15,912,000.0 | 15,912,000.0 | 15,912,000.0 | 15,912,000.0 | 15,912,000.0 | 15,912,000.0 | **15,912,000.0** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

*** մատուցված ծառայությունների համար վճարման 70/յոթանասուն/ տոկոսը իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումից 30 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մյուս 30 /երեսուն/ տոկոսի վճարումն իրականացվում է դրական փորձագիտական եզրակացության առկայության դեպքում:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011005718
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Հ. Բատիկյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Աճառյան 54բ, 375040
Ինեկոբանկ ՓԲԸ
ՀՀ 2050022451291001
ՀՎՀՀ 00813453
Տնօրեն՝ Դ. Քարտաշյան

/ստորագրություն/
Կ.Տ